

# ՆԻՒԹԵՐ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ՀՈՒՄ ՄԵՏԱՔՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գրեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

### II

Ծանօթացանք արդէն Անգլո-Վենետիկեան մրցակցութեան պատճառներուն, այսինքն՝ Մերձաւոր Արեւելքի հում ապրանքներուն ստացման եւ Եւրոպական ապրանքներու ներածման տիրապետութեան ձգտումին:

Տրուած անվիճելի վիճալութիւնները կը ցուցնեն, որ ճարպիկ Վենետիկցիք Հայ վաճառականներու շնորհիւ եւ գործակցութեամբ Անգլիական բրդեղէն արտադրութիւններով իսկ կը մրցէին Անգլիացոց դէմ Մերձաւոր Արեւելքի մէջ:

Ըստ իս՝ Վենետիկցոց յաջող եւ նախանձելի դիրքը այս առեւտուրին մէջ՝ անոնց տեղական արժէքներու եւ ժողովուրդներու քաջ ծանօթ ըլլալն էր, մանաւանդ Հայոց հետ հինէն ի վեր մշակած լաւ յարաբերութիւնը եւ հասկցողութիւնը:

Գիտենք թէ Վենետիկցիք եւ իրենց մրցակից ձենովացիք արդէն վաղուց ծանօթ էին Հայերու առեւտրական կարողութեանց, կանուխէն մտած էին Առաջաւոր Ասիոյ հրապարակը, Կիլիկիոյ Հայ թագաւորութեան ատեն իսկ սերտ յարաբերութիւն մշակած էին հայ առեւտրականներուն հետ, պայմանաւորուած, գործակցած էին անոնց հետ եւ երկար դարերու գործակցութեամբ իրարու արժէք, իրաւունք, դիրք ճշդած եւ նուիրագործած էին: Բնական է, որ հայոց համար աւելի դիւրին էր իրենց յարաբերութիւնը շարունակել զիրենց գնահատող եւ իրենց հետ գործակցող Վենետիկցոց հետ, քան ի նորոյ պայմանաւորուիլ հետաւոր, մշուշապատ Անգլիոյ զաւակներուն հետ, որոնք դեռ նոր եւ անփորձ այս գործի հրապարակը կը մտնէին՝ իրենց միջոցներուն մէջ խտրութիւն չդնելով, — բան մը, որ շու-

տով զգացուած ըլլալու էր սրամիտ եւ փորձառու հայ վաճառականէն:

Անգլիացոց, յոխորտ, այլամերժ, եսասէր նկարագիրը, մանաւանդ արեւելքցիներուն վերայ վերէն նայող, տիրական, նախընտրելի ընթացքը սկիզբէն իսկ զիրենք համակրելի ըրած չէր հաւասարապէս Հայուն, Պարսիկին կամ Թուրքին: Հազըլայթի թուղթերը ցոյց կուտան որ սկիզբէն իսկ Անգլիացիք համայնակուլ, համայնակողոպտիչ խըրտչեցնող ընթացք մը ցոյց տուած են, որ բնական է ոչ մէկ կերպով հաճելի պիտի ըլլար նրբակեաց եւ խորամանկ արեւելքցիներուն:

Նոյնիսկ ներկայ ըմբռնումով մենք կը տեսնենք, որ Անգլիացիք այդ օրերուն ջանացին ամէն միջոցով հրապարակին տիրանալ՝ ոտնակոխ ընելով մարդկային եւ առեւտրական պարկեշտութեան բոլոր սկզբունքները: Անոնք նոյնիսկ անվարան քաղաքական ամենաստոր դաւերու դիմեցին՝ ստեղծելու համար արիւնալից խառնակութիւն, դոնէ այդպիսով պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու մտադրութեամբ:

Անգլիացիք ջանացին տկարացնել Հայոց դիրքը Արեւելքի մէջ՝ այդպիսով զանոնք բռնադատելու համար որ լքեն հում մետաքսի եւ արեւելեան ուրիշ ապրանքներու առեւտուրը: Անոնք նոյնիսկ խաբուսիկ խոստումներով ապստամբութեան մղեցին հայերն ու վրացիները՝ յուսալով որ այդպիսով զանոնք երկրին տիրապետող մահմետականութեան աչքին անվստահելի պիտի դարձնեն եւ անոնց վայրագութիւնը Հայոց եւ Վրաց հանդէպ զրգուելով զանոնք պիտի փճացնեն:

Երբեք պէտք չէ մոռնալ այն ասեղ ուժը,